<<Հաստատում եմ>>
Նաիրի համայնքի ղեկավար
_____ Ն. Մարգսյան
<<26>> սեպտեմբեր՝ 2025թ.

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
N <<ԿՄՆՀ-ԳՀԱՇՁԲ-25/41>>

1. Պատվիրատուի անվանումը, գտնվելու վայրը. Նաիրիի համայնքապետարան, Հայաստանի Հանրապետություն, ք. Եղվարդ, Երևանյան 1:

2. Գնման անհրաժեշտությունը և գնման ձևի ընտրության հիմնավորումը. Գնման առարկա է հանդիսանում Նաիրի համայնքի Զովունի բնակավայրի 4-րդ փողոցի ջրամատակարարման աշխատանքների ձեռքբերումը: Գնման գործընթացն իրականացվել է <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 3)-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի համաձայն:

3. Հրավերը և դրանում կատարված փոփոխությունները. <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 06-ի թիվ 386-Ն որոշմամբ հաստատված <<Էլեկտրոնային ձևով գնումների կատարման>> կարգի և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան կազմվել է հրավեր, որը հաստատվել է գնահատող հանձնաժողովի 2025 թվականի սեպտեմբերի 12-ին կայացած նիստում: Հրավերում փոփոխություններ չեն կատարվել:

4. Գնման վերաբերյալ ստացված հարցումները և ներկայացված պարզաբանումները. Գնման վերաբերյալ հարցումներ չեն ստացվել, պարզաբանումներ չեն ներկայացվել:

5. Հայտեր ներկայացրած մասնակիցների տվյալները՝ անվանումը, գտնվելու կամ բնակության վայրը, կապի միջոցները.
<<ԿՄՆՀ-ԳՀԱՇՁԲ-25/41>> ծածկագրով գնման ընթացակարգին ներկայացվել է թվով մեկ հայտ՝

Հ/հ	Հայտ ներկայացրած մասնակցի		
	անվանումը	էլեկտրոնային փոստի հասցեն	Տ/Փ-ի ստացականի հ/հ
1	<<Շին Բարեկարգում>> ՍՊԸ	shinbarekargum@mail.ru հեռ.044-65-77-77	000268283

6. Հայտով ներկայացված գները.

Հ/հ	Մասնակցի անվանումը	Մասնակցի կողմից առաջարկված գնային առաջարկը (ՀՀ դրամ), ընդ որում՝		
		ինքնարժեք	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	<<Շին Բարեկարգում>> ՍՊԸ	16 208 333	3 241 667	19 450 000

7. Հայտերի գնահատման կարգը և դրանց գնահատման արդյունքները. Հայտերը գնահատվել են գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության և հրավերով սահմանված կարգով, և գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2025 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 2 որոշմամբ ընտրված մասնակից է ճանաչվել.
-N 1 չափաբաժնի մասով <<Շին Բարեկարգում>> ՍՊԸ –ն:

8. Հայտի մերժման դեպքում՝ դրա հիմնավորումը. <<ԿՄՆՀ-ԳՀԱՇՁԲ-25/41>> ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում հայտեր չեն մերժվել:

9. Պայմանագիրը, իսկ գնման գործընթացի արդյունքում պայմանագիր չկնքվելու դեպքում՝ դրա հիմնավորումը.
Չափաբաժին 1

2025 թվականի սեպտեմբերի 25-ին Պատվիրատու՝ Նաիրիի համայնքապետարանի, որը գտնվում է ք. Եղվարդ, Երևանյան 1 հասցեում, և Կապալառու՝ <<Շին Բարեկարգում>> ՍՊԸ -ի, որը գտնվում է ք.Երևան, Աջափնյակ, Շահումյան 16փ.180/1 հասցեում, միջև կնքվել է Նաիրի համայնքի Զովունի բնակավայրի 4-րդ փողոցի ջրամատակարարման աշխատանքների ձեռքբերման գնման պայմանագիր N <<ԿՄՆՀ-ԳՀԱՇՁԲ-25/41>>: Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 19 450 000 (տասնինը միլիոն չորս հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

10. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ հայտնաբերվելու դեպքում դրանց և այդ կապակցությամբ ձեռնարկված գործողությունների համառոտ նկարագիրը. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

11. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքները և դրանց վերաբերյալ կայացված որոշումները. Գնման գործընթացի վերաբերյալ բողոքներ չեն ներկայացվել:

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մ. Պապյան

(Կազմվել է <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի համաձայն)